ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Ապրիլի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ Եկեղեցիներից Հայաստան ժամանած շուրջ 25 եկեղեցական եւ աշխարհական ուխտավորների:

Ողջունելով նրանց համայն հայության նվիրական սրբավայրում՝ Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայոց Եկեղեցու ներկայիս գործունեությանը եւ նրա առաքելությանը մեր ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունն ընդգծեց, որ խորհրդային անասպվածության տարիներից հետո այսօր Եկեղեցին ամեն ջանք գործադրում է՝ վերանորոգելու եւ վերականգնելու դարեր շարունակ բազում հարվածներ կրած մեր ժողովրդի հոգեւոր կյանքն ու հավատքը:

Նորին Սրբությունն ուրախությամբ արձանագրեց, որ ջերմ եւ եղբայրական հարաբերություններ են ձեւավորվել Հայոց Եկեղեցու եւ Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ Եկեղեցիների միջեւ, որի վկայությունն այս երկրորդ ուխտագնացությունն է Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համագործակցությամբ: Վեհափառ Հայրապետը սիրով վերհիշեց Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու առաջնորդ Ջուկկա Պաարմայի եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Լեո արքեպիսկոպոսի այցերը Հայաստան, ինչպես նաեւ իր եղբայրական այցը Ֆինլանդիա:

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ ուխտագնացության այս օրերին, երբ աշխարհասփյուռ հայությունը ոգեկոչում է Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների հիշատակը, ֆինն ժողովրդի զավակներն աղոթակից ու զորակից պիտի լինեն հայ ժողովրդին: Նորին Սրբությունը մասնավորապես ընդգծեց, որ արդարությունը պիտի հաղթանակի, Հայոց ցեղասպանությունը դատապարտվի, որպեսզի նման ոճրագործություն երբեւէ տեղ չգտնի որեւէ այլ ժողովրդի կյանքում:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին: